ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ
Գետարգել համայնք, հեռ .6-14-88,getargel-gt@ mail.ru

10.04.2020թ.
N 111

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան

Ձեզ է ներկայացվում Գետարգել համայնքի ղեկավարի ընթացիկ շաբաթվա կայացրած որոշումները:

Առդիր 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝Գ.Ազիզյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ
Գետարգել համայնք,հեռ.0222 6-14-88,getargel-gt@ mail.ru

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼՅՈՎԱ ՊԱՊԻԿՅԱՆԻ ԵՎ ԱՐՈՒՍՅԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

06 ապրիլի 2020 թվական N 16-Ա

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով բաժանման սխեման

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիներ Լյովա Պապիկյանի և Արուսյակ Վարդանյանի սեփականություն հանդիսացող 4-րդ փողոցի թիվ 5 հասցեում գտնվող հողամասը (վկայական № 2375425) բաժանել 2 մասի՝ S1- 0.03953 հա և S2-0.03603 հա:

2. Հողամասի S1-0.03953 հա մակերեսով հատվածի հասցեն թողնել՝ գ. Գետարգել 4-րդ փողոց թիվ 5, իսկ S2-0.03603 հա մակերեսով հատվածին տրամադրել հասցե՝ գ. Գետարգել 4-րդ փողոց թիվ 5/1:

3 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2020թ 06-ը ապրիլի
Գ. Գետարգել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետարգել համայնք, հեռ, 0222 6-14-88, getargel-gt@ mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 06 >> ապրիլի 2020 թվականի N 17-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՈՒՍՅԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԾԱԾԿԱՐԱՆԻ, ՆԿՈՒՂԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արուսյակ Վարդանյանի դիմումը, որով ցանկություն են հայտնել իր կողմից 4-րդ փողոցի N 5 հասցեում ինքնակամ կառուցված 66.76 քմ բնակելի տունը, 40.3 քմ նկուղը, 21 քմ օժանդակ շինությունը, 11.24 քմ ծածկարանը և 7.63 քմ պարիսպը օրինականացնելու:

Ղեկավարվելով 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 9,10,11,13 ենթակետերի պահանջներով, քաղաքացի Արուսյակ Վարդանյանի դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. որոշում եմ

1. Քաղաքացի Արուսյակ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Գետարգել համայնքի 4-րդ փողոցի N 5 հասցեում գտնվող բնակավայրի նշանակության 0.03953 հա հողամասում ինքնակամ կառուցված S= 66.76 քմ բնակելի տունը, S= 40.3 քմ նկուղը, S= 21 քմ օժանդակ շինությունը, S= 11.24 քմ ծածկարանը և S = 7.63 քմ պարիսպը համարել օրինական:
2. Քաղաքացի Արուսյակ Վարդանյանը պարտավոր է համայնքային բյուջե՝ 900105229216 հաշվեհամարին մուծել բնակելի տան համար 173 576 / հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր յոթանասունվեց / ՀՀ դրամ, նկուղի համար 104 780 / հարյուր չորս հազար հինգ յոթ հարյուր ութսուն / ՀՀ դրամ, օժանդակ շինության համար 32 760 / երեսուներկու հազար յոթ հարյուր վաթսուն / ՀՀ դրամ, ծածկարանի համար 17 535 / տասյոթ հազար հինգ հարյուր երեսունհինգ / ՀՀ դրամ և պարիսպի համար 11 900 / տասնմեկ հազար ինը հարյուր / ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գետարգել համայնքի բյուջե՝ 900105229216 հաշվեհամարին 340 560 /երեք հարյուր քառասուն հազար հինգ հարյուր վաթսուն / ՀՀ դրամ օրինականացման վճարը մուծելուց հետո:
4. Որոշման ընդունման օրվանից ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման գումարը 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2020թ. 06-ը ապրիլի
գ. Գետարգել